ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.06.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/57

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
«Մեգիէլ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Փարիզյանի, ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի,
ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Վ. Վահանյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8871-2019 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.05.2019թ. թիվ ՊՆ/02/623-2019 գրության հիման վրա, 29.05.2019թ. «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.05.2019թ. թիվ ՊՆ/02/623-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 27.06.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-9/20-2 ծածկագրով գնման Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. մայիսի 6-ից միակողմանի՝ ամբողջությամբ լուծել է վերը նշված պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 22.05.2019թ. միաժամանակ ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Պատվիրատուի ներկայացուցիչը ներկայանալով նիստին, ներկայացրել է դիրքորոշման հավելում, որում մասնավորապես հայտնել է.

««Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2019/57 ընթացակարգի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը «Մեգիէլ» ՍՊ ընկերության հետ կնքված N ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի), քանի որ, «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը մինչև նշված պայմանագրի մաս կազմող «հավելված 1 – տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույց»-ով սահմանված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը՝ այն է 10.12.2018թ. և դրան հաջորդող 30 օրերի ընթացքում չի կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները և

պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող որևէ ապրանք չի մատակարարել:

Հիմնվելով «Մեգիէլ» ՍՊ ընկերության կողմից ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագրով ստանձնած պարտականությունները չկատարելու փաստի վրա՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը ս.թ. մայիսի 6-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը: ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծելու վերաբերյալ ծանուցումը էլեկտրոնային փոստով ուղարկվել է «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը megiel.tender@mail.ru հասցեով, ինչպես նաև պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, նշելով հրապարակման ամսաթիվը՝ համաձայն ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագրի 8.9 ենթակետի: Ընդ որում պայմանագրի 8.9 ենթակետի համաձայն՝ «Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:»:

ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու վերաբերյալ ծանուցումը հասանելի է հետևյալ հասցեով.

http://gnumner.am/website/images/original/--9.20-2%20%20.pdf

Ի լրումն վերոգրյալի՝ ցանկանում ենք տեղեկացնել, որ «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքներ մատակարարելու փոխարեն առաջարկել էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող ապրանքներ: Նշված առաջարկը ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչությունը ընդունելի չի համարել՝ հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը (այն է՝ «Արգելվում է՝ փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:»):»:

3. <u>«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 31.05.2019թ. գրությամբ դիմել է «Մեգիէլ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ

26/26-1/8871-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.05.2019թ. թիվ 26/26-1/8871-2019 գրությամբ Մեգիէլ ՍՊ ընկերությանը (հետայսու՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի գրության հիման վրա:

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերի, նկատառումների, Ընկերության եւ ՀՀ պաշտպանության նախարարության միջեւ 27.06.2018թ կնքված N ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագիրը (հետայսու՝ Պայմանագիր) 2.1.7.1 կետի «բ» ենթակետի՝ ապրանքի մատակարարման ժամկետները 30 օրից ավելի խախտելու հիմքով միակողմանի լուծելու վերաբերյալ առարկում ենք հետեւյալ պատճառաբանությամբ եւ հիմնավորմամբ:

28.08.2018թ թիվ ԴՎԱ/3249 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանը տեղեկացրել է, որ «Ձեր առ 20.08.2018թ գրությամբ ներկայացված առաջարկի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու նպատակով, առաջարկում եմ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության բերված փաստերի վերաբերյալ հնարավորինս սեղմ ժամկետում տալ պարզաբանում եւ ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների եւ ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագրով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանության վերաբերյալ հավաստող փաստաթղթեր, հակառակ դեպքում պայմանագրին 8.3 կետի պահանջների համաձայն կնախաձեռնվի պայմանագիրը միակողմանի լուծելու գործընթացը»:

Ընկերությունը 04.09.2018թ գրությամբ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանին հայտնել է, որ «ՈՒսումնասիրվել են ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետի 24.08.2018թ. թիվ 19/1677 գրությունը, ինչպես Նաև Ձեր կողմից բարձրացված հարցերը: Մեր ընկերությունից պահանջվել են համապատասխան փաստաթղթեր, որոնք կհավաստեն առաջարկվող վիրաբուժական թելերի համապատասխանությունը թիվ ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագրով մատակարարվող ապրանքների տեխնիկական բնութագրին:

Կարևորելով ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցության շրջանակներում պաշտպանական ոլորտին բարձր որակ ունեցող նոր սերնդի ապրանքների մատակարարման մեր հանձնառությունը՝ Ընկերությունը ապրանքի որակի հետ կապված ՀՀ ՊՆ դիրքորոշումը ներկայացրել է «Covidien AG, ԱՄՆ» ընկերությանը:

Խնդրի կարգավորման հրատապության եւ արագ արձագանքելու անհրաժեշտությունից ելնելով՝ «Covidien AG, ԱՄՆ» ընկերությունը՝ հանդիսանալով բժշկական պարագաների աշխարհում առաջատար ընկերություններից մեկը, գործուղում է իր ներկայացուցչին Հայաստանի Հանրապետություն:

ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչությունում 05.09.2018 թվականին կազմակերպվել է քննարկում «Մեգիէլ» ՍՊԸ տնօրենի, «Covidien AG, ԱՄՆ» կազմակերպության տարածաշրջանային ներկայացուցչի մասնակցությամբ, որի ընթացքում վերջինս կրկին անգամ հավաստել է «Covidien AG, ԱՄՆ» արտադրության վիրաբուժական կարանյութերում հակաբակտերիալ ծածկույթի բացակայությունը եւ ներկայացվել է համարժեքության վերաբերյալ տեղեկատվություն:

Հանդիպման ընթացքում «Covidien AG, ԱՄՆ» ընկերության ներկայացուցիչը մանրամասն ներկայացրել է մի ամբողջական փաթեթ վիրաբուժական թելերի արտադրման առաջատար գիտական փորձի եւ կլինիկական հետազոտությունների արդյունքների վերաբերյալ, որոնք արդեն իսկ կիրառվում են ամբողջ աշխարհում: Փաթեթում ներառված են «Covidien AG, ԱՄՆ» ընկերության, Առողջապահության Համաշխարհային կազմակերպության, «Առողջության եւ խնամքի գերազանցության» Մեծ Բրիտանիայի ազգային ինստիտուտի, «Վիրաբույժների եւ վիրաբուժական վարակաբանության» ԱՄՆ Ասոցիացիայի եւ մի շարք առաջատար գիտնականների կողմից կատարված կլինիկական հետազոտությունների արդյունքները:

Ընկերությունը եւս մեկ անգամ հավաստիացնում է, որ ,ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20ե գնման գործընթացի շրջանակներում ընկերության կողմից ներմուծված վիրաբուժական թելերն ունեն կլինիկապես ապացուցված համապատասխան հատկանիշներ, որոնք հավաստվում են ,Մեգիէլե ՍՊ ընկերության 04.09.2018թ. գրությամբ Ձեզ ներկայացված Covidien AG, ԱՄՆե Շվեյցարիայում գտնվող գլխամասային գրասենյակից ստացված պաշտոնական փաստաթղթով (կցվում է):

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարությանը հնարավորություն է ընձեռվում միջազգային ստանդարտներին համապատասխանող նոր սերնդի վիրաբուժական թելերի ձեռքբերման դեպքում եւ ներկայումս, եւ հետագայում ապահովելով մրցակցություն,

կախվածություն չունենալով կոնկրետ մեկ մատակարարից, որը տաիներ շարունակ հատուկ է եղել պաշտպանության նախարարության գործելաոճին: ՀՀ պետական բյուջեից տնտեսել զգալի գումարներ՝ միաժամանակ ապահովելով ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարվող ապրանքների բարձր որակը:ե

Վերը ներկայացված գործողությունների եւ բանակցությունների արդյունքում Ընկերությունը փաստացի պատվիրատուին ներկայացրել է պահանջվող ապրանքի որակական հատկանիշների համապատասխանության վերաբերյալ փաստաթղթեր, մասնագիտական գնահատականներ:

31.09.2019 թ Մեգիէլ ընկերությանը հասցեագրված գրությամբ տեղեկանում ենք, որ հարցում է կատարվել ՀՀ առողջապահության նախարարությանը, որին ի պատասխան ստացվել են ՀՀ բուժհաստատություններում օգտագործվող կարանյութերի վերաբերյալ տեղեկատվություն եւ ՀՀ ԱՆ ընդհանուր վիրաբուժության գծով խորհրդատուի մասնագիտական կարծիքը: Հիմք ընդունելով ստացված մասնագիտական կարծիքները՝ ՀՀ ՀՈՒ ՌԲ վարչությանն առաջարկվել է ,Մեգիէլե ՍՊ ընկերության կողմից առաջարկված ,Covidien AG, ԱՄՆե արտադրության վիրաբուժական կարանյութերը գնահատել համարժեք պայմանագրի տեխնիկական բնութագրերով սահմանված պահանջներին եւ կազմակերպել ընդունումը:

Սակայն ՀՀ ՀՈՒ ՌԲ վարչությունը շարունակել է մնալ իր իր չհիմնավորված սուբյեկտիվ կարծիքին, պատճառաբանելով՝ ռազմական վիրաբուժության առանձնահատկությունները եւ հակբակտերիալ ծածկույթի առկայության պահանջը համարել է կարեւոր, եւ առաջարկել է միակողմանի լուծել Պայմանագիրը:

Պատվիրատուն պետք է նշեր, թերեւս, մեկ ռազմական վիրաբուժության առանձնահատկություն, որը կհիմնավորեր Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի որակական հատկանիշներով ցանկալի արդյունքի հասնելու անհնարինությունը:

Բժշկական գիտության մեջ .վստահ ենք, որ գոյություն չունի ռազմական վիրաբուժության բնագավառ, կա ընդհանուր վիրաբուժություն եւ վիրաբուժական եղանակների բազմազանություն: Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի 2012 թվականին հրատարակած՝ պրոֆեսոր Մ. Միրիջանյանի, պրոֆեսոր Հ. Բարսեղյանի եւ դոցենտ Ս. Ստեփանյանի խմբագրությամբ Ընդհանուր Վիրաբուժություն մասնագիտական ձեռնարկում ներկայացված է, որ վիրաբուժությունը բժշկության այն բնագավառն է, որն ուսումնասիրում է մարդու մարմնի մասերի եւ օրգանների

վնասվածքները, հիվանդությունները՝ բուժման հատուկ մեթոդների կիրառմամբ, որոնք ուղեկցվում են օրգանիզմի ծածկութային հյուսվածքների ամբողջության խախտմամբ:

Ռազմական բժշկությունը որպես ծառայություն ռազմաբժշկական ծառայության համակարգ է, առանձնանում է իր ծառայության մատուցման, կազմակերպման եւ մարտավարության դրսեւորմամբ, բայց ոչ բժշկական միջամտությամբ: Թե՝ քաղաքացիական հասարակության եւ թե՝ ռազմական գործողությունների ընթացքում վիրաբուժական միջամտության կարիք ունեցող մարդը ունի նույն կենսաբանական կառուցվածքը եւ նրա բուժման համար անհրաժեշտ բժշկական պարագաները չեն կարող տարբեր լինել:

Պատվիրատուի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված, մերժողական դիրքորոշումը թույլ է տալիս ենթադրելու, որ առկա են կոռուպցիոն մեխանիզմներ և Պատվիրատուն խոչընդոտել է Ընկերության կողմից պատշաճ մատակարարման գործընթացին:

Ներկայացված փաստաթղթերի պարագայում պատվիրատուն հնարավորություն չի տվել որպեսզի Ընկերությունը իրականացնի պատշաճ մատակարարում՝ Պայմանագրով սահմանված ժամկետում:

Պայմանագրի 8.3 կետով նախատեսված է, ,Այն դեպքում, երբ օրենքով Նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչեւ պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ եւ տվյալներ) կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչեւ պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:ե

ՈՒշագրավ է այն, որ պաշտպանության նախարարության 28.08.2018թ թիվ ԴՎԱ/3249 գրությամբ հայտնում են, որ պայմանագրի 8.3 կետի համաձայն միակողմանի կլուծվի պայմանագիրը, սակայն մինչ ներկա պահը այդ հիմքով չեն նախաձեռնել լուծել պայմանագիրը, որը վկայումն է այն բանի, որ Ընկերության ներկայացրած փաստաթղթերը եւ մատակարավող ապրանքը համապատասխանում են պահանջվող ապրանքատեսակին,

եւ տեխնիկապես, եւ որակական հատկանիշներով ապահովում են պահանջվող անհրաժեշտ արդյունքը:

Ընկերությունը 07.09.2018թ գրությամբ, հասցեագրված ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանին, հայտնել է ,05.09.2018թ. արդեն իսկ տեղի է ունեցել ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության եւ ,Covidien AG, ԱՄՆե ընկերության ներկայացուցիչների միջեւ հանդիպումը, որով առաջարկվել է, որպեսզի վիրաբուժական թելերի մատակարարման գործընթացը Պաշտպանության նախարարությանը շարունակվի: Սակայն վերոգրյալ նամակը մինչ օրս մնացել է անպատասխան:

Հարկ է ընդգծել, որ ,Մեգիէլե ընկերությունը ոլորտի զարգացման հրամայականից ելնելով՝ հատկապես կարեւորում է որակյալ ապրանքների մատակարարման ապահովումը, քանի որ այն ուղղակիորեն առնչվում է զինծառայողների առողջության պահպանման իրավունքին:

Որակյալ ապրանքների մատակարարման անհրաժեշտությունն ամրագրված է Առեւտրի համաշխարհային կազմակերպության վերանայված համաձայնագրում, Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2014/24/EC դիրեկտիվում, ինչպես նաեւ միջազգային իրավական այլ փաստաթղթերում:

Բացի այդ,,Գնումների մասինե ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրվում է, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի որակին եւ ստանդարտին, ինչպես նաեւ գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ Նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների վրա:

Այս կապակցությամբ ,Մեգիէլե ՍՊ ընկերությունը, չնայած թիվ ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագրով մատակարարվող ապրանքների տեխնիկական բնութագրով սահմանված փակաբակտերիալ ծածկույթիե պահանջին, ՀՀ պաշտպանության նախարարությանը առաջարկում է աշխարհում արդեն իսկ կիրառվող եւ միջազգային նորագույն ստանդարտներին համապատասխանող վիրաբուժական թելեր: Նշվածը հավաստվում է կից ներկայացվող դեռեւս 2014 թվականից ներառյալ 2018 թվկանաին իրականացված հետազոտությունների արդյունքներով:

Պատվիրատուի կողմից անգործության դրսեւորման պարագայում Ընկերությունը 15.05.2019 թվականին կրկին դիմել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանին հայտնելով, որ ,Ընկերությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները պատշաճ կերպով կատարումն

ապահովելու համար: Մասնավորապես՝ Ընկերությունն ,Covidien AG, ԱՄՆ-ից ձեռք է բերել եւ ՀՀ ներկրել Պայմանագրով նախատեսված խմբաքանակի ապրանքներ՝ պատվիրատուին մատակարարելու համար: Այդուհանդերձ՝ Պատվիրատուի կողմից հայտարարվել է, որ ներկայացված բնութագրերով ապրանքները չեն ընդունվի՝ հակաբակտերիալ ծածկույթ չունենալու պատճառաբանությամբ:

Այսպիսով, ընկերության կողմից նշված է, որ առաջարկվող վիրաբուժական թելերն ունեն կլինիկապես ապացուցված համապատասխան հատկանիշներ, Ընկերության կողմից ներկայացված ապրանքները լիարժեքորեն կարող են ծառայել այն նպատակի համար, ինչի համար Պատվիրատուն մրցույթ է հայտատարել ու Պայմանագիր կնքել:

Միաժամանակ առաջարկել է ՀՀ պաշտպանության նախարարությանը նախապայմաններ ապահովել Ընկերության կողմից բարձր որակի ու նոր սերնդի միջազգային ստանդարտներին համապատասխանող վիրաբուժական թելերի մատակարարման գործընթացի իրականացման համար: Ընկերությունը ներկայացրել է նաև Պայմանագրով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերի համարժեքության վերաբերյալ փաստաթղթեր:

Պայմանագրի կատարման կապակցությամբ վերոգրյալ գործընթացներն իրականացնելուց հետո Պատվիրատուի կողմից այդպես էլ 15.05.2019 թ -ի դրությամբ ոչ մի հստակ պատասխան չի տրվել կամ հայտարարություն չի արվել Մեգիէլ ՍՊ ընկերության՝ 07.09.2018 թ.-ի գրության վերաբերյալ: Նման պայմաններում Պայմանագրի կատարման կապակցությամբ Ընկերության համար առաջացել է անորոշ վիճակ՝ Ընկերությունը չի կարողանում իրականացնել մատակարարումը, միաժամանակ չի կարողանում այլ կերպ տնօրինել Պայմանագրի կատարման կապակցությամբ ներկրված ապրանքները՝ ենթադրելով, որ ցանկացած պահի մատակարարման պահանջ կարող է ներկայացվել Պատվիրատուի կողմից:

Նման պայմաններում առաջարկում ենք հայտնել Պատվիրատու ՀՀ պաշտպանության նախարարության դիրքորոշումը 2018 թվականի հունիսի 27-ին կնքված 1\/ԳՀԱՊՁԳ-9/20-2 պայմանագրի կատարման կապակցությամբ՝ նկատի ունենալով, որ կատարող ,ՄԵԳԻԷԼԷ ՍՊ ընկերությունը ներկայումս նույնպես պատրաստ է իր ներկայացված առաջարկի շրջանակներում ամբողջ ծավալով կատարելու մատակարարման պարտավորությունը:ե

Վերը ներկայացվածից ըստ էության պարզ է, որ Ընկերությունը բոլոր հնարավոր միջոցներով փորձել է իրականացնել պատշաճ մատակարարում, սակայն Պատվիրատուի կողմից խոչընդոտվել է:

Այն, որ Պատվիրատուն միակողմանի լուծել է Պայմանագիրը Ընկերությունն իրազեկվել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ուղարկված նյութերից:

Պատվիրատուն պարտավոր էր Պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում ծանուցել Ընկերությանը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Ընկերության 15.05.2019 թվականի գրությանն ի պատասխան Պատվիրատուն ի թիվս այլի հայտնել է հետեւյալը, ,Ընկերության կողմից 04.09.2018թ եւ 07.09.2018թ գրություններով հավաստվել է ,Covidien AG, ԱՄՆ արտադրության վիրաբուժական կարանյութերում հակաբակտերիալ ծածկանյութի բացակայությունը եւ ներկայացվել են համարժեքության վերաբերյալ տեղեկատվություն: Վիրաբուժական կարանյութերի տեխնիկական բնութագրերով, որպես պարտադիր պահանջ սահմանված հակաբակտերիալ ծածկույթի էական նշանակության վերաբերյալ:

Ի դեպ Պատվիրատուն 31.05.2019թ գրությամբ է հայտնել, որ Պայմանագիրը չկատարված մասով լուծվել է: Ֆինանսների նախարարությանը ներկայացված գրությամբ հայտնել է, որ Պայմանագիրը լուծվել է ամբողջությամբ:

31.05.2019թ գրությամբ Պատվիրատուն, ըստ էության, աշխարհում առաջատար Covidien AG ԱՄՆ ընկերության ներկայացրած գիտական ուսումնասիրության վրա հիմնված պաշտոնական փաստաթղթերով հավաստումը մատակարավող ապրանքի միջազգային ստանդարտների համապատասխանությանը, ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած մասնագիտական գնահատականները դնում է կասկածի տակ, ստորադասում է ՀՀ ՀՈՒ ՌԲ վարչության սուբեկտիվ ներկայացրած կարծիքին՝ պատճառաբանելով բժշկակն գիտությանն անծանոթ ռազմական վիարբուժության տերմինալոգիան:

Վիրաբուժության վերոնշված մասնագիտական նկարագրից չենք կարող հասկանալ, որ ռազմական գործողություններին մասնակցած մարդկանց նկատմամբ կիրառվում է այնպիսի վիրաբուժություն, որը դուրս է ընդհանուր վիրաբուժության ոլորտից:

Այնուամենայնիվ, եթե այդպիսին կա ապա ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչությունը պարտավոր էր պատճառաբանված ներկայացներ գեթ մեկ առանձնահատկություն, այլապես անհիմն դրսեւորումները մեկ անգամ եւս վկայումն են այն, որ ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչությունը սատարում է կոռուպցիոն ռիսկերի զարգացմանը:

Ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարության հետ գործնական բանակցությունների ժամանակ, բազմիցս ներկայացրել է, որ մեր կողմից ներկայացվող Covidien AG ԱՄՆ ֆիրմայի ապրանքները համաշխարհային առողջապահության ոլորտի առաջատար ապրանքներից են, դրանք ապահովում են անհրաժեշտ ցանկալի արդյունք եւ այն ձեռք բերելու դեպքում պետական բյուջեի զգալի խնայողություններ կգրանցվի՝ «գին-որակ» համադրությամբ:

Գործնական բանակցությունների ժամանակ բազմիցս ակցենտավորվել է, որ Պատվիրատուն պետք է առաջնորդվի պետության շահերից ելնելով եւ ոչ կոնկրետ ընկերության սուբյեկտիվ հետաքրքրություններով առաջնորդվի:

Ո ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագրով մատակարավող ապրանքների ձեռքբերման դեպքում Պատվիրատուն ունենալու էր բարձրակարգ որակի ապրանք եւ պետական միջոցների խնայողություն, մինչդեռ, Պատվիրատուն բացառապես ձեւական նկատառումից ելնելով խոչընդոտել է Պայմանագրի պատշաճ մատակարամանը:

Պաշտպանության նախարարությունը տեխնիկական բնութագրերով ներկայացնում է այնպիսի չափորոշիչներ, որոնք համապատասխանում են միայն Ethicon ապրանքանիշին, որը Հայաստանի Հանրապետությունում մատակարավում է մեկ ընկերության կողմից: Պետական միջոցների խնայողությունը եւ կոռուպցիոն մեխանիզմների բացառումը, դրանց ձեւավորման կանխարգելումը պետք է գտնվի պետական մարմնի մտահոգության առաջնային տիրույթում, գործունեության քաղաքականության հիմնական սկզբունքներից: Այս մոտեցմամբ առաջնորդվելու դեպքում գրեթե մեկ տարի Պատվիրատուն արհեստական խոչընդոտներ չէր ներկայացնի մատակարարումն իրականացնելու համար և գործնական բանակցությունների ժամանակ չէր թողնի այնպիսի տպավորություն, կարծես բանակցում էինք Ethicon ընկերության ներկայացուցչի հետ:

Եթե պաշտպանության նախարարությունը կարեւորում եւ բացառապես առաջնորդվում է ռազմական վիրաբուժության շահերից ելնելով, ապա մատակարավող ապրանքի անհրաժեշտությունը, կարեւորությունը առաջնային կլիներ մտացածին, ձեւական ձեւակերպումներից:

Ի դեպ Մեգիէլ ՍՊ ընկերությունը որդեգրել է այն քաղաքականությունը եւ առաջնորդվել է այն սկզբունքով, որ հնարավորինս բացառվի տեխնիկական բնութագրերով ներկայացված այնպիսի նկարագրերը որոնք քողարկված կոռուպցիա են նախանշում: Ասվածի ապացույցն է այն, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքները միշտ բավարարվել են (բացառությամբ մեկ դեպքի, պատվիրատուն՝ Պաշտպանության նախարարություն):

Ստեղծված իրավիճակը լիովին հիմք է տալիս եզրահանգելու, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Պայմանագրի կատարմանը խոչընդոտելու գործընթացն ունեցել է մեկ միտում, որ Մեգիէլ ՍՊ ընկերությունը ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այդպիսով բացառելով մրցակցությունն՝ իրենց նախընտրած ընկերությունների համար, քանի որ աշխարհում Ethicon ընկերության հավասարազոր մրցակից է հանդիսանում Covidien AG ԱՄՆ ընկերության արտադրատեսակները:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8871-2019 գրությամբ .Մեգիէլե ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը:»:

Մասնակիցը ներկայացնելով դիրքորոշման լրացում, հայտնել է.

«Հարկ եմ համարում ներկայացնել, Medtronic ընկերության կողմից արտադրվող ապրանաքուռեսակները «Մեգիէլ» ՍՊ ընկերության (հետայսու՝ Ընկերություն) կողմից հայաստանյան շուկայում ներկայացնելու սկզբնական քայլերին Պաշտպնության նախարարությանը իրազեկելու եւ նախաձեռնությունը ողջունելու, իրենց հավանությունը տալու գործընթացը:

Ընկերությունը, 2017թ հոկտոմբերի 06-ին, Medtronic ընկերության արտադրանքը ներկայացնելու նպատակով պրեզենտացիա էր կազմակերպել «Գոլդեն Փելիս» հյուրանոցի կոնֆերանս դահլիճում, որին հրավիրվել էին պաշտպանության նախարարության ներկայացուցիչները եւ իրենց մասնակցությունն էին ապահովել ռազմաբժշկական վարչության աշխատակիցներ Սեւակ Շահբազյանը, Գեւորգ Ոսկանյանը, Նորայր Հարությունյանը, ներկա են եղել նաեւ Ընկերության տնօրեն Սամվել Փարիզյանը, աշխատակիցներ Գրիգոր Աբրահամյանը եւ Նաթելլա Բախտամյանը, Medtronic ընկերության ներկայացուցիչ Անդրի Խլիվնին:

Պրեզենտացիայի ժամանակ ներկայացվել են նորագույն վիրաբուժական պարագաներ եւ վիրաբուժական թելեր: Ներկայացված ապրանքատեսակի վերաբերյալ ռազմաբժշկական վարչության աշխատակիցներն արտահայտելով իրենց հիացմունքը հայտնել են, որ այն շատ ավելի որակյալ եւ նոր սերնդի արտադրանք է, ցանկություն են հայտնել որպեսզի գնումների ընթացակարգով մատակարարվող ապրանքների շարքում այն ներառվի, իրենց հավանությունն արտահայտելով հետեւյալ կերպ, մեջբերում եմ.

«Վերջապես կազատվենք տարիներ շարունակ միևնույն ընկերության մատակարարվող ապրանքների կախվածությունից»:

Պատվիրատուի «ռազմաբժշկական վիիաբուժություն» տերմինով եւ վարչության ուղակի անհիմն կարծիքով առաջնորդվելու մոտեցումը տարակուսելի է պետական միջոցներով գնումների ընքացակարգի ապահովման տեսանկյունից: Հարկ եմ համարում ընդգծել մի փաստ, որ ՊՆ վիրաբուժական բաժանմունքը իրականացնում է վիրաբուժություն ոչ միայն ռազմական գործողությունների արդյունքում վնասվածքները ստացած զինծառայողների նկատմամբ, այլ նաեւ պահուստային զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների նկատմամբ:

Անդրադառնալով N ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագրով ապրանքների մատակարարման իրողությանը հայտնում եմ, ես Սամվել Փարիզյանս, հանդիսանալով «Մեգիէլ» ՍՊ ընկերության տնօրեն, հավաստում եմ, որ Ընկերությունը N ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագրով նախատեսված վիրաբուժական թելերը մատակարարել է ՊՆ N զորամաս, որի ապացույցը կարող է հանդիսանալ իմ սույն հայտարարությունը, ինչպես նաեւ N զորամասում առկա գրանցամատյանում լրացված տվյալներն առ այն, որ 2018 թվականի օգոստոս ամսի 32 UO 079 պետհամարանիշով, կանաչ գույնի FORD Transit մեքենան մուտք է գործել N զորամասի պահեստ, իրականացվել է ապրանքի բեռնաթափում, սակայն պահեստի աշխատակիցները վերջնական ընդունում չեն իրականացրել հայտնելով, որ այն պետք է ընդունվի հանձնաժողովի կողմից համապատասխան պահանջվող փաստաթղթերով: Ապրանքը գտնվել է պահեստում եւ Ընկերության աշխատակիցը խնդրել է տրամադրել որոշակի ժամանակ նշված փաստաթղթերը ներկայացնելու համար:

Ապրանքի մատակարամանը հաջորդիվ նախարարության հետ սկսվել են երկարատեւ նամակագրություն, հանդիպումներ, որից հետո Ընկերության աշխատակից Գրիգոր Աբրահամյանին հեռախոսազանգի միջոցով N զորամասի պահեստի աշխատակից Հասմիկը հայտնում է որպեսզի մատակարարված վիրաբուժական թելերն իրենց պահեստից հետ ընդունենք:

Քանի որ, նամակագրությունները եւ բանակցությունները դեռեւս շարունակվում էին ընդառաջելով խնդրանքին N զորամասի պահեստից եւ են վերադարձվել վիրաբուժական թելերը, Գրիգոր Աբրահամյանի կողմից 35 FL 451 պետհամարանիշով Audi A4 մեքենայով:

Ներկայացված փաստերի հավաստումը գտնվում է նախարարության տնօրինման ներքո, քանի որ պաշտպանության նախարաության տարածքը բաց գոտի չէ եւ այնտեղ մուտք գործելու համար որոշակի հաշվառման գործընթաց է պահանջվում, ուստի Ընկերության կողմից մատակարարում իրականացնելու ժամանակ աշխատակիցները հավանաբար գրանցվել են, թույլտվություն ստացել մուտք եւ ելք ունենալ նախարարության տարածք եւ այդ ընթացակարգը գրանցվել է զրանցամատյանում:

Խնդրում եմ՝ Ձեր լիազորությունների իրացմամբ նախարարությունից պահանջել ներկայացնելու այդ գրանցամատյանը որում պետք է առկա լինի վերը ներկայացված տեղեկությունը:

Ընկերության կողմից ապրանքի մատակարարում իրականացնելու փաստի ի հավաստում է նաեւ այն, որ ապրանքը ստանալուց հետո պաշտպանության նախարարությունը գրավոր հարցում է ներկայացրել առողջապահության նախարարությանը վիրաբուժական թելերի որակական հատկանիշների վերաբերյալ, որի վերաբերյալ ստացել է դրական պատասխան, այն է «ընդունել Մեգիէլ ՍՊ ընկերության մատակարարած թելերը» (31.05.2019թ գրություն):

Կարծում եմ, ՊՆ համապատասխան բաժինը, որը զբաղվել է այն գնման ընթացկարգով որի արդյունքում կնքվել է N ԳՀԱՊՁԲ-9/20 պայմանագիրը, ուշադրության չի արժանացրել մի նուրբ դրվագ, որն առնչվում է հայտի մանրամասներին, այն է «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը մեկ ֆայլով բեռնել էր հավելված 1, հավելված 3, հավելված 4-ը, 08.04.2018թ. լրացված հավելված 1-ում (դիմում գնանշման հարցմանը մասնակցելու) կար վրիպակ թվերով 43 գրելիս թիվ 3-ը վրիպել էինք, գնահատող հանձնաժողովը գնահատել էր որպես վրիպակ, 08.04.2018թ. լրացված հավելված 4-ում (հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկականկ բնութագրի համապատասխանության մասին) Ընկերությունը լրացրել է, որ բնութագրերը համարժեքորեն համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժիններում նշված տեխնիկական բնութագրերի պահանջներին:

05.05.2018թ. ստանում ենք հեռախոսազանգ ՊՆ համապատասխան բաժնի աշխատակցի կողմից, որպեսզի շտկենք հավելված 1-ի վրիպակը, որը ուղարկելիս կից հավելված 4-ում կրկին երեւում է համարժեքորեն բառը:

07.05.2018թ. կրկին սպանում ենք հեռախոսազանգ արդեն հավելված 4-ի վերաբերյալ, որի ընթացքում խնդրում են հանել համաբժերոբեե բառը, պատճառաբանելով, որ միեւնույն է Ընկերությունը ճանաչվել է հաղթող:

Ընդառաջ գնալով եւ կատարելով ՊՆ խնդրանքը այժմ ծավալված գործընթացը հիմք է տալիս կարծելու, որ դա ծուղակ էր, որպեսզի հետագայում խոչընդոտեին Ընկերության կողմից մատակակարման իրականացմանը, որը հետապնդում էր մեկ նպատակ «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող անձանց ցուցակում:»:

Ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված լրացուցիչ նյութերի, Մասնակիցը հավելել է, որ.

«ՍՅ-ԼՕ-2019/57 ընթացակարգի (հետայսու՝ Ընթացակարգ) շրջանակում ՀՀ պաշապանության նախարարության կողմից 24.06.2019 թվականին ներկայացրած գրությունները ընկերությանը հասանելի են դարձել 25.06.2019 թվականին:

1. Պաշտպանության նախարարությունը գրություններից մեկով հայտնում է, որ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն ուղարկել է ընկերության megiel.tender@mail.ru էլեկտրոնային փոստին, բայց չի ներկայացրել, թե պատվիրաուի ո՞ր էլեկտրոնային հասցեից է ուղարկել, երբ է ուղարկել եւ, եթե ուղարկել է ապա պետք է ներկայացներ ուղարկման փաստը հավաստող էլեկտրոնային փոստի ւռվյալ էջի արտատպված տեղեկությունը, որտեղ արտացոլված կլիներ ուղարկման օրը եւ ում կողմից է ուղարկվել, ինչպես արել են ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգ կայքից ի հավաստում այն բանի, որ պայամանգրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է, ի դեպ այդ արտատպված էջում նշված չէ թե ե՞րբ է համակարգում ծանուցումը հրապարակվել:

Ընկերությունը ինչպես իր գրավոր դիրքորշմամբ եւ 06.06.2019թ, 14.06.2019թ նիստերի ժամանակ հայտնել է, որ պաշտպանության նախարարությունը պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում չի ուղարկել, այնպես էլ սույն գրությամբ է հայտնում այդ մասին:

ՊՆ այդ գրության մյուս հատվածին չենք անդրադառնում, քանի որ ըստ էության կրկնում են այն ինչ արդեն ներկայցրել են 14.06.2019թ նիստի ժամանակ, որի վերաբերյալ ընկերությունը ներկայացրել է իր հակափաստարկները:

2. Պաշտպանության նախարարությունը մյուս գրությամբ, որը վերաբերում է «Մեգիէլ» ՍՊ ընկերության ավտոմեքենայի եւ աշխատակցի մուտքը պաշտպանության

նախարարություն ըստ էության փաստել է, որ դա համապատասխանում է մեր վկայակոչած փաստերին եւ դա իրականություն է: -

Պաշտպանության նախարարությունը տեղեկություն է տրամադրել նաեւ այն մասին, որ 28.09.2018թ Աբրահամյանը մուտք է գործել զորամասի տարածք, սակայն իրականացրել է մատակարարում մեկ այլ պայմանագրի շրջանակում: Պատվիրատուի գործողություններում եւ գրություններում միտում է նկատվում իրականությունը ներկայացնել այն լույսի ներքո, կարծես ընկերության հայտնած աեղեկությունեները կասկածելի են եւ չեն համապատասխանում իրականությանը: Ի դեպ, եւս մեկ անգամ հայտնում ենք, ինչպես ներկայացվեց 14.06.2019թ նիստի ժամանակ, որ 2018 թվականի սեպտեմբեր ամսին ընկերությունը մատակարարում իրականացրել է մեկ այլ պայմանգրի շրջանակում, որի հաշիվ-վավերագրերը ներկայացվել են նիստի ժամանակ: Ժամանակավրեպ է պատվիրատուի անդրադարձը ԳՀԱՊՁԲ-9/21-1 պայմանագրի 28.09.2018 թվականի մատակարարման մանրամասներին եւ որեւէ կերպ չի առնչվում քննարկվող հարցին:

Պաշտպանության նախարարությունը 24.06.2019թ ներկայացրած գրությամբ տեղեկություն է ներկայացրել նաեւ, որ «Մեգիէլ» ՍՊ ընկերության աշխատակից Աբրահամյանը 35 FL 451 պետհամարանիշի ավտոմեքենայով 02.08.2018թ, 08.08.2018թ, 15.08.2018թ մուտք է գործել զորամասի տարածք, սակայն չի մեկնաբանում այդ այցերի մասին մանրամասն ինչպես մանրամասնել է 28.09.2018 թվականի այցի մասով, ի դեպ ուշագրավ է, որ 08.08.2018 թվականին մուտք է գործել զորամաս 11:55-ին եւ դուրս է եկել 15:00-ին:

Ինչ վերաբերում է պատվիրատուի պահանջին, որ ընկերությունը ներկայացնի մատակարարված ապրանքի վերաբերյալ ի հավաստում «ի պահ հանձնման, հաշիվ վավերագիր, ի պահ ընդունման ակտ, արձանագրություն», ապա հայտնում ենք դրանց բացակայության հանգամանքները եւ պատճառները ներկայացրել ենք մեր գրավոր դիրքորոշումներով, հրավիրված նիստերի ժամանակ ներկայացված հիմնավորումներով եւ փաստական հանգամանքների վկայակոչմամբ եւ եւս մեկ անգամ փաստում, որ պայմանագրի պատշաճ մատակարարման իրականացմանը խոչընդոտել է պատվիրատուն տարաբնույթ պատճառաբանություններով եւ արհեստականորեն անհնարինություն ստեղծելով, ինչի մասին նաեւ անուղղակիորեն վկայեց պատվիրատուի ներկայացուցիչը 14.06.2019թ նիստի ժամանակ:

Ինչ վերաբերվում է 32 UO 079 պետհամարանիշով կանաչ գույնի FORD Transit մեքենայի վերաբերյալ տեղեկության բացակայությանը, ապա չենք բացառում, որ այն մուտք

է գործել պատվիրատուի զորամաս հուլիս ամսին կամ մեր կողմից շփոթմունք է եղել մեքենաների մակնիշների վերաբերյալ, քանի որ արդեն անցել է գրեթե 10 ամիս:

Պատվիրատուի ներկայացրած մեկնաբանություններից ելնելով, այնուամենայնիվ միջնորդում ենք, որպեսզի հրավիրվի եւս մեկ նիստ, պաշտպանության նախարարությունը ներկայացնի զորամասի տարածք մուտք գործած մեքենաների հաշվառման մատյանը, այն ուսումնասիրվի նիստի ընթացքում, որը հնարավորություն կտա արձանագրելու արդյոք ընկերության ներկայացրած տեղեկությունը օբյեկտիվ իրականության մեջ տեղի է ունեցել, թե պաշտպանության նախարարությունը միտումնավոր կասկածելի տեսանկյունից է փորձում ներկայացնել մեր վկայակոչած փաստերը: Եթե վերոհիշյալ մատյանի գրառումները համարվում են գաղտնիք, ապա գաղտնիքի չհրապարակման վերաբերյալ կստորագրենք համապատասխան փաստաթուղթ գիտակցելով դրա իրավական հետեւանքները:»:

4. <u>ՍՑ-LO-2019/57 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 27.06.2018թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20-2» ծածկագրով վիրաբուժական թելերի գնման պայմանագիր (այսուհետ' Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 10.12.2018թ.-ը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. մայիսի 6-ից միակողմանի՝ ամբողջությամբ լուծել է վերը նշված պայմանագիրը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի դրույթները (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի):

www.gnumner.am համացանցային կայքում 22.05.2019թ. հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 27.06.2018թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20-2» ծածկագրով պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության

կողմից 06.05.2019թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի):

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի 28.08.2018թ.-ի թիվ ԴՎԱ/3249 Ընկերությանն ուղղված գրության համաձայն՝ *«Ձեր առ 20.08.2018թ գրությամբ ներկայացված առաջարկի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու նպատակով, առաջարկում եմ ՀՀ ՋՈՒ ռազմաբժշկական վարչության բերված փաստերի վերաբերյալ հնարավորինս սեղմ ժամկետում տալ պարզաբանում եւ ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների եւ ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագրով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանության վերաբերյալ հավաստող փաստաթղթեր, հակառակ դեպքում պայմանագրին 8.3 կետի պահանջների համաձայն կնախաձեռնվի պայմանագիրը միակողմանի լուծելու գործընթացը»:*

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի 31.05.2019թ.-ի թիվ ԴՎԱ/2081 Ընկերությանն ուղղված մեկ այլ գրության համաձայն՝ *«Ձեր առ 15.05.2019թ. գրությանն ի պատասխան հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ կարիքների համար վիրաբուժական կարանյութեր ձեռքբերելու նպատակով անցկացվել է ԳՀԱՊՁԲ-9/20 մրցույթը, որի ժամանակ ներծծվող կարանյութերի համար սահմանված է եղել հակաբակտերիալ ծածկույթի առկայության պահանջ:*

«Մեգիէլ» ՍՊ ընկերությունը՝ որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ներկայացրել է «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» արտադրության վիրաբուժական կարանյութերի մատակարարման առաջարկ՝ ներծծվող կարանյութերի համար նշելով հակաբակտերիալ ծածկույթի առկայության փաստը: ՀՀ ՊՆ և «Մեգիէլ» ՍՊ ընկերության միջև 27.06.2018թ. կնքվել է N ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագիրը, որի համաձայն 2018 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակներում ընկերությունը պարտավորվել է մատակարարել վիրաբուժական կարանյութեր՝ ներծծվող և չներծծվող:

Ներծծվող կարանյութերի համար պայմանագրի տեխնիկական բնութագրերով սահմանված է եղել հակաբակտերիալ ծածկույթի առկայության պահանջ:

ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչությունը գրությամբ տեղեկացրել է, որ ռաումնասիրությունների, ինչպես - նաև «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» կազմակերպությանը կատարված հարցման արդյունքում պարզվել է, որ «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» արտադրության վիրաբուժական կարանյութերը չունեն պայմանագրով սահմանված հակաբակտերիալ ծածկույթ: Հաշվի առնելով վերոգրյալ՝ ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչության, հետագայում նաև ՀՀ ՋՈՒ ԳՇ պետի կողմից առաջարվել է միակողմանի լուծել պայմանագիրը՝ համաձայն պայմանագրի 8.3 կետի:

Ի պատասխան մեր 28.08.2018թ. թիվ ԴՎԱ/3249 գրության՝ «Մեգիէլ» ՍՊ ընկերության կողմից առ 04.09.2018թ. և 07.09.2018թ. գրություններով ներկայացվել է պարզաբանումներ, որով հավաստվել է «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» արտադրության վիրաբուժական կարանյութերում հակաբակտերիալ ծածկույթի բացակայությունը և ներկայացվել են համարժեքության վերաբերյալ տեղեկատվություն: ՀՀ ՀՈՒ ՌԲ վարչությունում 05.09.2018թ-ին կազմակերպվել է քննարկում «Սեգիէլ» ՍՊԸ տնօրենի, Medtronic կազմակերպության տարածաշրջանային ներկայացուցչի մասնակցությամբ, որի ընթացքում վերջիններս կրկին անգամ հավաստել են «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» արտադրության վիրաբուժական կարանյութերում հակաբակտերիալ ծածկույթի բացակայությունը և ներկայացվել են համարժեքության վերաբերյալ տեղեկատվություն: Վիրաբուժական կարանյութերի տեխնիկական բնութագրերով, որպես պարտադիր պահանջ սահմանված հակաբակտերիալ ծածկույթի էական նշանակության վերաբերյալ հարցում է կատարվել ՀՀ առողջապահության նախարարությանը, որին ի պատասխան ստացվել են ՀՀ բուժհաստատություններում օգտագործվող կարանյութերի վերաբերյալ տեղեկատվություն և ՀՀ ԱՆ ընդհանուր վիրաբուժության գծով խորհրդատուի մասնագիտական կարծիքը: Հիմք ընդունելով ստացված մասնագիտական կարծիքները՝ ՀՀ ՀՈՒ ՌԲ վարչությանը առաջարկվել է «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» արտադրության վիրաբուժական կարանյութերը գնահատել համարժեք պայմանագրի տեխնիկական բնութագրերով սահմանված պահանջներին և կազմակերպել ընդունումը:

ՀՀ ՀՈՒ ՌԲ վարչությունը շարունակել է մնալ իր կարծիքին՝ հաշվի առնելով ռազմական վիրաբուժության առանձնահատկությունները՝ հակաբակտերիալ ծածկույթի առկայության պահանջը համարել է կարևոր, և առաջարկել է միակողմանի լուծել ՀՀ ՊՆ և «Մեգիէլ» ՍՊ ընկերության միջև 27.06.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագիրը, քանի որ վիրաբուժական կարանյութերի պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել արտադրողի պաշտոնական գրությամբ ներկայացված նույն ապրանքանիշի տեխնիկական բնութագրերի հետ:

Այս ընթացքում պարբերաբար կազմակերպվել են Ձեր մասնակցությամբ հանդիպումներ, որոնց ժամանակ Դուք տեղեկացվել եք, որ անհրաժեշտ է մատակարարել պայմանագրի տեխնիկական բնութագրերին համապատասխան՝ հակաբակտերիալ ծածկույթով վիրաբուժական կարանյութեր:

Միաժամանակ հայտնում եմ, որ 06.05.2019թ-ին ՀՀ ՊՆ և «Մեգիէլ» ՍՊ ընկերության միջև 27.06.2018թ. կնքված N 9-ՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագիրը չկատարված մասով միակողմանի լուծվել է, որի մասին Ձեզ ծանուցվել է 21.05.2019թ. ԴՎԱ/1928 գրությամբ:»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8871-2019 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն' պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ' պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն' պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 27.06.2018թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20-2» ծածկագրով վիրաբուժական թելերի գնման պայմանագրի 1.1-ի հիման վրա Մասնակիցը պարտավորվել է Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 10.12.2018թ.-ը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. մայիսի 6-ից միակողմանի՝ ամբողջությամբ լուծել է վերը նշված պայմանագիրը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի դրույթները (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի):

www.gnumner.am համացանցային կայքում 22.05.2019թ. հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 27.06.2018թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20-2» ծածկագրով պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 06.05.2019թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի):

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի 28.08.2018թ.-ի թիվ ԴՎԱ/3249 Ընկերությանն ուղղված գրության համաձայն՝ *«Ձեր առ 20.08.2018թ գրությամբ ներկայացված առաջարկի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու*

նպատակով, առաջարկում եմ ՀՀ ՋՈՒ ռազմաբժշկական վարչության բերված փաստերի վերաբերյալ հնարավորինս սեղմ ժամկետում տալ պարզաբանում եւ ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների եւ ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագրով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանության վերաբերյալ հավաստող փաստաթղթեր, հակառակ դեպքում պայմանագրին 8.3 կետի պահանջների համաձայն կնախաձեռնվի պայմանագիրը միակողմանի լուծելու գործընթացը»:

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի 31.05.2019թ.-ի թիվ ԴՎԱ/2081 Ընկերությանն ուղղված մեկ այլ գրության համաձայն՝ *«Ձեր առ 15.05.2019թ. գրությանն ի պատասխան հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ կարիքների համար վիրաբուժական կարանյութեր ձեռքբերելու նպատակով անցկացվել է ԳՀԱՊՁԲ-9/20 մրցույթը, որի ժամանակ ներծծվող կարանյութերի համար սահմանված է եղել հակաբակտերիալ ծածկույթի առկայության պահանջ:*

«Մեգիէլ» ՍՊ ընկերությունը՝ որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ներկայացրել է «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» արտադրության վիրաբուժական կարանյութերի մատակարարման առաջարկ՝ ներծծվող կարանյութերի համար նշելով հակաբակտերիալ ծածկույթի առկայության փաստը: ՀՀ ՊՆ և «Մեգիէլ» ՍՊ ընկերության միջև 27.06.2018թ. կնքվել է N ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագիրը, որի համաձայն 2018 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակներում ընկերությունը պարտավորվել է մատակարարել վիրաբուժական կարանյութեր՝ ներծծվող և չներծծվող:

Ներծծվող կարանյութերի համար պայմանագրի տեխնիկական բնութագրերով սահմանված է եղել հակաբակտերիալ ծածկույթի առկայության պահանջ:

ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչությունը գրությամբ տեղեկացրել է, որ ռաումնասիրությունների, ինչպես - նաև «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» կազմակերպությանը կատարված հարցման արդյունքում պարզվել է, որ «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» արտադրության վիրաբուժական կարանյութերը չունեն պայմանագրով սահմանված հակաբակտերիալ ծածկույթ: Հաշվի առնելով վերոգրյալ՝ ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչության, հետագայում նաև ՀՀ ՋՈՒ ԳՇ պետի կողմից առաջարվել է միակողմանի լուծել պայմանագիրը՝ համաձայն պայմանագրի 8.3 կետի:

Ի պատասխան մեր 28.08.2018թ. թիվ ԴՎԱ/3249 գրության՝ «Մեգիէլ» ՍՊ ընկերության կողմից առ 04.09.2018թ. և 07.09.2018թ. գրություններով ներկայացվել է պարզաբանումներ, որով հավաստվել է «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» արտադրության վիրաբուժական կարանյութերում հակաբակտերիալ ծածկույթի բացակայությունը և ներկայացվել են համարժեքության վերաբերյալ տեղեկատվություն: ՀՀ ՋՈՒ ՌԲ

վարչությունում 05.09.2018թ-ին կազմակերպվել է քննարկում «Սեգիէլ» ՍՊԸ տնօրենի, Medtronic կազմակերպության տարածաշրջանային ներկայացուցչի մասնակցությամբ, որի ընթացքում վերջիններս կրկին անգամ հավաստել են «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» արտադրության վիրաբուժական կարանյութերում հակաբակտերիալ ծածկույթի բացակայությունը և ներկայացվել են համարժեքության վերաբերյալ տեղեկատվություն: Վիրաբուժական կարանյութերի տեխնիկական բնութագրերով, որպես պարտադիր պահանջ սահմանված հակաբակտերիալ ծածկույթի էական նշանակության վերաբերյալ հարցում է կատարվել ՀՀ առողջապահության նախարարությանը, որին ի պատասխան ստացվել են ՀՀ բուժհաստատություններում օգտագործվող կարանյութերի վերաբերյալ տեղեկատվություն և ՀՀ ԱՆ ընդհանուր վիրաբուժության գծով խորհրդատուի մասնագիտական կարծիքը: Հիմք ընդունելով ստացված մասնագիտական կարծիքները՝ ՀՀ ՀՈՒ ՌԲ վարչությանը առաջարկվել է «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» արտադրության վիրաբուժական կարանյութերը գնահատել համարժեք պայմանագրի տեխնիկական բնութագրերով սահմանված պահանջներին և կազմակերպել ընդունումը:

ՀՀ ՀՈՒ ՌԲ վարչությունը շարունակել է մնալ իր կարծիքին՝ հաշվի առնելով ռազմական վիրաբուժության առանձնահատկությունները՝ հակաբակտերիալ ծածկույթի առկայության պահանջը համարել է կարևոր, և առաջարկել է միակողմանի լուծել ՀՀ ՊՆ և «Մեգիէլ» ՍՊ ընկերության միջև 27.06.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագիրը, քանի որ վիրաբուժական կարանյութերի պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել արտադրողի պաշտոնական գրությամբ ներկայացված նույն ապրանքանիշի տեխնիկական բնութագրերի հետ:

Այս ընթացքում պարբերաբար կազմակերպվել են Ձեր մասնակցությամբ հանդիպումներ, որոնց ժամանակ Դուք տեղեկացվել եք, որ անհրաժեշտ է մատակարարել պայմանագրի տեխնիկական բնութագրերին համապատասխան՝ հակաբակտերիալ ծածկույթով վիրաբուժական կարանյութեր:

Միաժամանակ հայտնում եմ, որ 06.05.2019թ-ին ՀՀ ՊՆ և «Մեգիէլ» ՍՊ ընկերության միջև 27.06.2018թ. կնքված N 9-ՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագիրը չկատարված մասով միակողմանի լուծվել է, որի մասին Ձեզ ծանուցվել է 21.05.2019թ. ԴՎԱ/1928 գրությամբ:»:

Հիմք ընդունելով վերոնշյալը, համադրելով գործով ձեռք բերված փաստական հանգամանքները, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից

ստանձնած պայմանագրային պարտավորությունն անպատշաճ (մատակարարման ժամկետների 30 օր և ավել խախտմամբ) կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով՝ ՀՀ պաշտպանության նախարարության (որպես պարտատեր) և «Մեգիէլ» ՍՊԸ-ի (որպես պարտապան): Պարտատերը, թեկուզ անզգուշությամբ, սակայն իր գործողություններով նպաստել է պարտապանի կողմից ստանձնած պարտավորություններն անպատշաճ կատարելուն, ինչպես նաև ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, որի արդյունքում էլ հանգեցրել է պայմանագրով նախատեսված Մասնակցի կողմից ստանձնած պարտավորության խախտմանն ու դրա հետևանքով՝ պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պատվիրատուն, որպես պարտատեր, գտնելով, որ մատակարարված ապրանքը չի համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրին, ապա Պայմանագրի 2.1.2 կետով սահմանված կարգով պետք է Վաճառողի համար սահմաներ ոչ պատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ:

Նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ձեռնարկվել են հնարավոր բոլոր գործողություններն՝ ուղղված պայմանագրով նախատեսված իր կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին:

Վերոնշյալի մասին են վկայում, նաև ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի կողմից Մասնակցին ուղղված թվով երկու՝ 28.08.2018թ.-ի թիվ ԴՎԱ/3249 և 31.05.2019թ.-ի թիվ ԴՎԱ/2081 գրությունները:

Հատկապես 31.05.2019թ.-ի թիվ ԴՎԱ/2081 գրությամբ հստակ նշվել է, որ «… *Հիմք ընդունելով ստացված մասնագիտական կարծիքները՝ ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչությանը առաջարկվել է «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» արտադրության վիրաբուժական կարանյութերը գնահատել համարժեք պայմանագրի տեխնիկական բնութագրերով սահմանված պահանջներին և կազմակերպել ընդունումը:»:*

Սակայն նույն գրությամբ նշվել է, որ՝ *«ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչությունը շարունակել է մնալ իր կարծիքին՝ հաշվի առնելով ռազմական վիրաբուժության առանձնահատկությունները՝ հակաբակտերիալ ծածկույթի առկայության պահանջը համարել է կարևոր, և առաջարկել է միակողմանի լուծել ՀՀ ՊՆ և «Մեգիէլ» ՍՊ ընկերության միջև 27.06.2018թ. կնքված N*

ԳՀԱՊՁԲ-9/20-2 պայմանագիրը, քանի որ վիրաբուժական կարանյութերի պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել արտադրողի պաշտոնական գրությամբ ներկայացված նույն ապրանքանիշի տեխնիկական բնութագրերի հետ»:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով նախատեսված իր կողմից ստանձնած պարտավորությունն անպատշաճ (մատակարարման ժամկետների 30 օր և ավել խախտմամբ) կատարելը տեղի է ունեցել ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչության կողմից «Medtronic, Covidien AG, ԱՄՆ» արտադրության վիրաբուժական կարանյութերի պայմանագրի տեխնիկական բնութագրերով սահմանված պահանջներին համարժեք չգնահատելու, այն որպես անպատշաճ որակի ապրանք գնահատելու պատճառով: Ըստ էության ապրանքի որակի (պատշաճ/անպատշաճ), վերջինիսի պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանելու շուրջ ծագած տարաձայնությունների պատճառով: Նման պայմաններում պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգը մերժելու միջոցով:

Ուստի նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8871-2019 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**